ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

-- ---------- 2021 թվականի №----Ա
քաղ. Երևան

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՏԵՐՅԱՆ ՓՈՂՈՑ, 107 ՀՈՂԱՄԱՍ ՀԱՍՑԵԻ ՆՈՐ ՀԱՄԱԿԱՐԳԸ ՋՐԱՀԵՌԱՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻՆ ՄԻԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) «ՌԵՆՇԻՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ՝ Դիմող անձ) 2021 թվականի փետրվարի 19-ի №21-12 գրությամբ դիմել է Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով)՝ հայտնելով, որ Երևան քաղաքի Տերյան փողոց, 107 հողամաս հասցեում նախատեսում է կառուցել բազմաբնակարան շենք, որի ջրամատակարարման և ջրահեռացման համար «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերությունից (այսուհետ՝ Մատակարար) ստացել է տեխնիկական պայմաններ, որով Մատակարարի ջրահեռացման համակարգին միացման կետ է սահմանվել Երևան քաղաքի Թումանյան և Տերյան փողոցների հատման կետը: Դիմող անձը խնդրել է թույլատրել ջրահեռացումը ժամանակավորապես իրականացնել հողամասին հարակից չշահագործվող կոյուղագծերով՝ մինչև Մատակարարի տրամադրած տեխնիկական պայմանների համաձայն ջրահեռացման համակարգի կառուցումը,

բ) Մատակարարը և Դիմող անձը համապատասխան գրություններով հայտնել են, որ չեն առարկում Մատակարարի ջրահեռացման համակարգին միացման գործընթացը սույն որոշմամբ սահմանված ընթացակարգով իրականացնելուն,

և հիմք ընդունելով Հանձնաժողովի 2016 թվականի նոյեմբերի 30-ի №378Ն որոշման 1-ին կետով հաստատված խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման

(կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման կանոնների (այսուհետ՝ Կանոններ) 23-րդ կետը՝ Հանձնաժողովը **որոշում է**.

1. Սահմանել, որ՝

   1) Երևան քաղաքի Տերյան փողոց, 107 հողամաս հասցեի նոր համակարգի ջրահեռացման համակարգին միացումը իրականացվում է ժամանակավոր՝ շինարարական աշխատանքներ կատարելու նպատակով, Կանոնների 11.1 կետով սահմանված ընթացակարգով Մատակարարի կողմից առանձին տեխնիկական պայմաններ տրամադրելու միջոցով, նախատեսելով ջրահեռացման համակարգին միացումը հողամասին հարակից կոյուղագծերի օգտագործմամբ՝ մինչև Մատակարարի 2020 թվականի նոյեմբերի 12-ին տրամադրած №ՎՋ 593/2020 տեխնիկական պայմանների համաձայն նոր ջրահեռացման համակարգի կառուցումը, բայց ոչ ավելի, քան մինչև սույն կետի 2-րդ ենթակետով ամրագրված ծառայության մատուցման ժամկետի ավարտը.

   2) Դիմող անձի կողմից սույն կետի 1-ին ենթակետին համապատասխան ժամանակավոր միացման համար անհրաժեշտ կառուցման աշխատանքների ավարտից հետո Դիմող անձի հետ, Կանոնների 21.1 կետով սահմանված ընթացակարգով, կնքվում է խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման պայմանագիր՝ միայն ջրահեռացման ծառայության մասով՝ Հանձնաժողովի 2016 թվականի նոյեմբերի 30-ի №379Ն որոշմամբ սահմանված օրինակելի ձևին համապատասխան, բացառությամբ պայմանագրի գործողության ժամկետը սահմանող կետի, որը սահմանվում է 6 ամիս՝ հաշված պայմանագիրը կնքելու պահից, առանց երկարաձգման հնարավորության.

   3) Դիմող անձի ջրամատակարարումն իրականացվում է Մատակարարի 2020 թվականի նոյեմբերի 12-ին տրամադրած №ՎՋ 593/2020 տեխնիկական պայմանների համաձայն կառուցվող նոր համակարգի միջոցով.

   4) Մինչև սույն կետի 2-րդ ենթակետով սահմանված պայմանագրի գործողության ժամկետի ավարտը Դիմող անձի և Մատակարարի միջև ջրահեռացման ծառայությունների մատուցման սահմանազատման կետ է համարվում Մատակարարի ջրահեռացման համակարգին միացման կետը.

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Մատակարարին և Դիմող անձին օրենքով սահմանված կարգով իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ**

ք. Երևան
-- ---------- 2020թ.